

Հիմնադրված
15 սեպտեմբերի 2022թ.
№ 17 (583)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀԻՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ
ՊԱՏԱՍԱՆԱՏՎՈՒԹՅԱՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru



**Հաղթողը
կյանքն է...**

ՀԱՄ ՍԱՀՅԱՆ

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

ԱՐԱ ՉԱՔԱՐՅԱՆ.

«Միսիանը սահմանապահ
համայնք է, ու սահմանը պահում
է ոչ միայն դիրքապահ գինվորը,
այլև համայնքում ապրող
յուրաքանչյուր ոք»



Խոսք ընտրողին

Իմ սիրելի հայրենակիցները սպասում են, որ որպես համայնքապետի թեկնածու, թե արդեն ընտրված համայնքապետ, ես դիմելու եմ նրանց նույնպիսի ուղղամտությամբ ու վճռականությամբ, ինչպիսին պահանջում է մեր համայնքի ներկա վիճակը: Այսօր իսկապես ժամանակն է ասելու ամբողջ ճշմարտությունը: Մենք պատճառ չունենք, ոչ էլ կարիք՝ խուսափել համայնքի անմիջապես վիճակի ազնիվ ու արդար գնահատականից:

Միսիանն իսկապես գտնվում է ծանր և բարդ իրավիճակում, բայց կասկած չունեմ մենք հաղթահարելու ենք առկա դժվարությունները: Միակ բանը, ինչից պետք է վախենալ՝ հուսալքությունն է, որ կաթվածահար է անում մեր ջանքերը՝ նահանջը հարձակման, հետընթացն առաջընթացի վերածելու ճանապարհին: Ինձ ու իմ թիմին անհրաժեշտ են ձեր ըմբռնումը, հավատը, աջակցությունը՝ համայնքի բոլոր բնակիչներին համար ընդհանուր խնդիրները հաջողությամբ լուծելու համար:

Մեր բնակավայրերի մի մասում չկան կյանքի տարրական պայմաններ: Աշխատատեղերի բացակայության կամ աշխատանքի ցածր եկամտաբերության պատճառով առավելագույնը երեկո աշխատող մարդիկ անգամ դժվարությամբ են ապրում: Եվ այդուհանդերձ՝ մեր համայնքի անկումը նյութական, ֆինանսական միջոցների անբավարարությունից չէ իրականում: Գլխավոր պատճառը համայնքային իշխանությունների կառավարչական անգործությունն է կամ անարդյունավետ գործունեությունը, անազնիվ ու իրենց գործին չտիրապետող պաշտոնյաների ձախողումները:

Համայնքը վերականգնելու և զարգացնելու համար կոնկրետ միջոցառումների կարիք կա, ըստ որում անհապաղ: Բայց այդ չեն կարող անել ու չեն անի այն մարդիկ, ովքեր մեզ հասցրել են այս վիճակին: Նախկինն ու ներկան պետք է հեռանան ընտրությունների հետևանքով, որպեսզի մենք լուծենք համայնքի ու սիսիանցու առաջնահերթ խնդիրը՝ աշխատանքը վերադարձնենք մարդկանց, կարգ ու կանոն հաստատենք մեր համայնքում, ձևավորենք գործունակ և արդյունավետ, սիսիանցու շահերով առաջնորդվող ազնիվ ու արդար համայնքային իշխանություն:

Տեղյակ ենք, կարող ենք, կանենք:
ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐԱ ՉԱՔԱՐՅԱՆ

**ԵՎԵԱԹԵՐԹԻԿ
№ 18**



ԱՐԱ ԶԱԽԱՐՅԱՆ. «Սիսիանը սահմանապահ համայնք է, ու սահմանը պահում է ոչ միայն դիրքապահ գինվորը, այլև համայնքում ապրող յուրաքանչյուր ոք»

Սիսիան համայնքի ավագանու սեպտեմբերի 25-ին կայանալիք ընտրությանը մասնակցում է նաև «Ապրելու երկիր» կուսակցությունը, որի նախընտրական ցուցակը գլխավորում է Արա Զախարյանը: Արա Զախարյանը նոր դեմք է Սյունիքի մարզի և մասնավորապես Սիսիանի հասարակական-քաղաքական կյանքում: Ուստի և կարևոր համարեցինք պարզել ոչ միայն մեր պարբերականին, այլև Սիսիանի հանրությանը հետաքրքրող մի քանի հարցի վերաբերյալ նրա պատկերացումներն ու ծրագրերը:

– Զարգելի պարոն Զախարյան, նախ ողջունում ենք Ձեր պատրաստակամությունը՝ մասնակցելու Սիսիան համայնքի ղեկավարի համար ընտրապայքարին և հաջողություններ մաղթում: Ու քանի որ առաջին անգամ ենք նման պատասխանատու նպատակադրությամբ ներկայանում հանրությանը, կուզենայինք նախ և առաջ ճշտել՝ ո՞վ է Արա Զախարյանը: Ընդ որում՝ մի քանի խոսքով էլ՝ Ձեր ապրած տարիների մասին:

– Արա Զախարյանը Սիսիանի ներկա վիճակով մտահոգ սիսիանցիներից մեկն է, ով ի վիճակի է իր կառավարչական փորձով, գիտելիքներով, հնարավորություններով ու կապերով ծառայել Սիսիան համայնքին և նրա բնակիչներին: Ու համայնքի ղեկավարի պաշտոնում առաջադրվելու իմ որոշումն իրավիճակային չէ: 2016 թվականին բարձր քվեներով ընտրվել եմ Սիսիան քաղաքային համայնքի ավագանու անդամ: Ավագանու անդամի փորձառությունն ինձ բավարար է՝ ներսից հասկանալու, թե ինչպես է աշխատում համայնքային իշխանությունը: – Սիսիան բազմաբնակավայր համայնք, որ ընդգրկում է Սիսիանի երբեմն

նի ամբողջ շրջանը, մեր հանրապետության ամենախոշոր տարածաշրջաններից է: Եվ այդ համայնքը, այն էլ դժվարին մեր ժամանակներում, այն էլ բազմաթիվ հիմնախնդիրների, մարտահրավերների դեպքում, ձգտում էք ղեկավարել, համենայնդեպս նման հայտ եք ներկայացրել: Ի՞նչն է Ձեզ մղում նման պատասխանատու քայլի, ինչո՞վ են պայմանավորված Ձեր ձգտումը, մտադրությունը: – Սյունիքը Հայաստանի ողնաշարն է, Սիսիան համայնքը՝ Սյունիքի դարպասը: Մեր համայնքի վարչական սահմաններն արևելքում և արևմուտքում պետական սահման են: Մենք ամենաերկար պետական սահման ունեցող շրջանն ենք Հայաստանում: Ու սահմանի այս կողմից մյուս կողմ ընդամենը 26 կմ է: Սա նշանակում է մեկ բան՝ Սիսիանը, նրա բոլոր գյուղերն ուղղակի սահմանամերձ բնակավայրեր չեն, այլ սահմանապահ: Արցախյան բոլոր պատերազմներում սիսիանցիներն ամենաշատ զոհերն են տվել, սա մեր ցավն է, բայց և հպարտությունն ու պարտքը՝ մեր հերոս նահատակների սուրբ հիշատակի առջև, իմ պարտքը... Սիսիանը պետք է ապրի, պետք է զարգանա, որ անառիկ մնա Սյունիքի դարպասը: Սիսիանը, Սյունիքը պետք է ապրեն, որ կանգուն մնան Արցախն ու Հայաստանը: – Դուք եղել և մտում եք անկուսակցական, բայց ընտրության եք գնում «Ապրելու երկիր» կուսակցության դրոշմով, ինչո՞ւ: Արդյո՞ք քաղաքական այդ ուժը Սի-

ծրագրերի համաֆինանսավորմանը, օժանդակում համայնքային իշխանությանը՝ բարձրակարգ մասնագետների, լուրջ ներդրողների հետ կապեր հաստատելու գործում: Ի դեմս «Ապրելու երկիր» կուսակցության՝ մենք և Սիսիանը ձեռք ենք բերել ուժեղ և լուրջ քաղաքական գործընկեր ու բարեկամ: – Ծանոթ լինելով Ձեր անձնական հեղինակությանը, հայրենի եզերքին Ձեր գերդաստանի նվիրվածությանը, Սիսիանում վերջին շրջանում անցկացված հարցախոյզների արդյունքներին, կարող ենք ենթադրել, որ բացի «Ապրելու երկիր» կուսակցության համակիրներից, Ձեր հետևից կգան նաև համայնքի երիտասարդությունը, Սիսիանի ճակատագրով մտահոգ շատ մարդիկ: Եվ, այդքանով հանդերձ, ո՞րն է սոցիալական-քաղաքական այն խավը, որի համար Դուք պահանջված եք՝ իբրև համայնքի ղեկավար, ովքեր Ձեր սոցիալական-քաղաքական հենարանն են: – Մեզ այսօր նախևառաջ միասնություն է պետք՝ տարիներով կուտակված խնդիրները լուծելու համար, իսկ դրանք շատ-շատ են: Մեր գյուղերից ու Սիսիան քաղաքից մեծ արտագաղթ կա, որովհետև մարդիկ աշխատանք չունեն, աշխատանք ունեցողներն ամբողջ օրն աշխատում են, բայց ցածր եկամուտ վաստակում: Մեր բնակավայրերում կյանքի որակը շատ ցածր է՝ անբարեկարգ ճանապարհներ, խմելու և ոռոգման ջրի խնդիր, ժամանցի ու հանգստի պայմանների բացակայություն: Երիտասարդին Սիսիանում պահող ոչինչ համարյա չկա, աշխատել ցանկացող ու աշխատող մարդուն Սիսիանում պահող պայման չկա: Մեր թիմի սոցիալական հենարանն են համարում բոլոր նրանց, ովքեր ուզում են աշխատել և ապրել Սիսիանում: – Փորձեք գնահատել Ձեր նախընտրական թիմի և մրցակից քաղաքական ուժերի նախընտրական թիմերի հնարավորությունները: – Սեպտեմբերի 25-ի ընտրություններում ես և իմ թիմը սիսիանցիներից հայցում ենք բացարձակ մեծամասնության վստահության քվե՝ 50+1 տոկոս: Ավագանին բաղկացած է 21 անդամից, մեզ տրված առնվազն 11 մանդատը կնշանակի, որ սիսիանցիները, շարքային ընտրողներն են առաջնային մանդատի կրողը, իրենք են անմիջականորեն ընտրում համայնքապետ, այլ ոչ ավագանին: Սա նշանակում է, որ ես և իմ գլխավորած թիմը կրելու ենք անհատական պատասխանատվություն յուրաքանչյուր ընտրողի առջև, հաշվետու և պատասխանատու ենք լինելու միայն իրենց առջև: – Սիսիանում (գաղտնիք չէ) վերջին տասնամյակներում ընտրությունները (համապետական, ՏԻՄ) հիմնականում անցել են լարվածության, երբեմն նույնիսկ ակնհայտ թշնամանքի մթնոլորտում: Ինչպե՞ս եք գնահատում ներկայիս նախընտրական մթնոլորտը համայնքում: Ի՞նչն է առավել շատ բնութագրական քաղաքաշավին՝ նախընտրական ծրագրերի, գաղափարների մրցակցությունը, թե՛... Արդյո՞ք հեռու է այն ժամանակը, երբ ընտրություններից հետո մարդիկ միմյանց հակառակորդներ



Ք.Սիսիան

Մեր խնի, իրար թշնամի չեն համարի...

Մեր հաղթանակի ձգտելու նպատակը հենց այն է, որ վերջ տանք միմյանց վիրավորելու, անխմաստ թշնամության արատավոր մթնոլորտին, համախմբել բոլոր առողջ ուժերը և միասնաբար լուծել համայնքի խնդիրները: Սովորաբար մեզ մոտ ընտրությունների ժամանակ ծրագրերով մրցակցելու փոխարեն թեկնածուները հիմնականում գովազդային քարոզարշավ են վարում ու անհատական քվեի համար զանգահարում, հանդիպում ընտրողների հետ: Ձևական նախընտրական ծրագրերը մարդկանց մեծ մասը լուրջ չի ընդունում և չեն էլ կարդում: Փորձել ենք ծրագրային-գաղափարական քարոզչություն իրականացնել: Կարծում ենք ընտրողներին հետաքրքիր է, քանի որ արձագանքները շատ են:

– Իսկ վարչական ռեսուրսը... Ցավոք, վարչական ռեսուրսը միշտ էլ կարևոր գործոն է եղել բոլոր կարգի ընտրություններում: Գիմա էլ՝ նույնպես. որքան էլ ասենք՝ վարչական ռեսուրսը չի օգտագործվում, այդպես չէ: Ի՞նչ կասեք այդ կապակցությամբ:

Վարչական ռեսուրսի կիրառման գայթակղություն, իհարկե, կա, մենք դա տեսնում ենք, և կան փորձեր՝ վարչական լծակներ օգտագործելու: Սա նշանակում է ընդամենը, որ վարչական ռեսուրս կիրառողները չեն գիտակցել, թե ժողովուրդն ինչու 2018 թվականին դուրս եկավ փողոց, թե ի՞նչ է փոխվել Զայաստանում և սիսիանցիների վարքագծում, մտածողության մեջ: Ամեն դեպքում հիմա վարչական լծակ կիրառողները, եթե այդպիսի ցանկություն ունենին, ժամանակին պետք է հոգ տանեին իրենց հեղինակության մասին, որ մարդիկ գոնե հարգելով լսեին իրենց խորհուրդը: Չավեշտն այն է, որ վարչական լծակն օգտագործվել է ներկա կամ նախկին պաշտոնյա բազմաթիվ մարդկանց նկատմամբ՝ նախընտրական ցուցակներում ներառելու համար:

– Եթե Դուք հավակնում եք ղեկավարել համայնքը, ուրեմն ինչ-որ առումով դժգոհ եք կամ առնվազն գոհ չեք Սիսիանի ներկա վիճակից և ուզում եք շտկել դրությունը: Գետաբերքի է՝ համայնքային գործերում հատկապես ի՞նչն է, որ Ձեզ չի գոհացնում և մտահոգության տեղիք տալիս:

Համայնքային իշխանությունից ժողովուրդը որևէ ակնկալիք չունի, նույնիսկ անիմաստ են համարում խոսել խնդիրներից: Ինձ չի գոհացնում նաև այն, որ այսօր Սիսիանը համայնքային բյուջեի մեծությամբ Սյունիքի մարզում 4-րդ տեղում է՝ Կապանից, Քաջարանից ու Գորիսից հետո: Դժգոհ եմ սուբվենյուն ծրագրերին համայնքի թույլ ներդրավածությունից: Սիսիանի մասնաբաժինը մարզին հատկացված բոլոր սուբվենյանների մեջ կազմում է ընդամենը 10 տոկոս, ինչու՞ն:

– Մենք հասցրել ենք ծանոթանալ Ձեր գլխավորած քաղաքական թիմի նախընտրական ծրագրին: Բազմաթիվ կարևոր հիմնադրույթներ ենք տեսնում այդ փաստաթղթում:

Փորձեք շատ համառոտ ներկայացնել՝ որո՞նք են նախընտրական ծրագրի հիմնական ուղղությունը, միտումը, տրամաբանությունը և, իհարկե, որքանո՞վ է այն իրատեսական:

Մեր ծրագիրը նախընտրական չէ: «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով սահմանված է, որ նորընտիր համայնքային իշխանությունը երկամյա ժամկետում պարտավոր է հաստատել համայնքի զարգացման 5-ամյա ռազմավարական ծրագիր: Ընտրություններին մասնակցելու հայտը ներկայացրած լուրջ ու պատասխանատու թիմը, ըստ այդմ, պետք է նախապես հոգ տաներ նման ծրագիր մշակելու մասին:

– Մեր խմբագրությունը քաջատեղյակ է Սիսիանի համայնքի հոգսերին, իսկ Ձեր նախընտրական ծրագրի ու այս գրույցի շնորհիվ մեր պատկերացումներում ավելի հստակություն մտցվեց:

Խնդիրները, իհարկե, շատ-շատ են, բայց փորձեք առանձնացնել առավել կարևոր մի քանի խնդիր, որոնք, Ձեր ընտրվելու դեպքում, առաջին հերթին կգտնվեն համայնքային իշխանության ուղարկության կենտրոնում:

Նախընտրական քարոզչության ժամկետը սահմանված է օրենքով, ընդամենը 24 օր, որոնց ընթացքում թեկնածուները պետք

է հասցնեն հանդիպել ընտրողների հետ 36 քննակալայրում, Սիսիան քաղաքում: Այսպիսի պայմաններում ստիպված են վարել մեկ թեմայի քարոզչություն, ու այդ թեմայի մեջ միավորել համայնքի տարաբնույթ ու բազմաթիվ խնդիրների լուծումը: Կարծում եմ մեր թիմին հաջողվել է լուծել այդ խնդիրը: Ծրագրի գլխավոր, հիմնական թեման «Ապրելու Սիսիանն է», «Ապրելու համայնքը», որտեղ տնտեսական զարգացման հիմնական, գերակա ուղղություններն են գյուղատնտեսությունը, ագրոարդյունաբերությունը և զբոսաշրջությունը, իսկ համայնքային իշխանության մարմինների հիմնական գործառնությունը՝ բնակչության կյանքի որակի ապահովման մեխանիզմների ձևավորումը:

– 2020 թ. նոյեմբերի 9-ից և հատկապես դեկտեմբերի 18-ից հետո Սիսիանի տարածաշրջանը մի քանի ուղղությամբ դարձավ Ադրբեջանին սահմանակից: Եթե նախկինում միայն Նախիջևանի ուղղությամբ էր սահման, հիմա՝ նաև հյուսիսային, հյուսիսարևելյան և հյուսիսարևմտյան ուղղություններով:

2021-ի նոյեմբերի 16-ին էլ մարտական գործողություններ տեղի ունեցան անմիջապես Սիսիան քաղաքի մերձակա տարածքներում՝ Մեծ Իշխանասարի և Փոքր Իշխանասարի ստորոտներում:

Սահմանների պաշտպանության, ամրակայման, բնակչության անվտանգության ապահովման առումով հա-

ՀԱՅՐԵՆԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՀԵՏ



Մեծ Իշխանասար, լեռնագագաթը Սյունիքի բարձրավանդակում, Սիսիանի տարածաշրջանի հյուսիսարևելքում: Իշխանասար լեռնագագաթի ամենաբարձր գագաթը (3549 մ): Իշխանասար լեռնագագաթում կա նաև Փոքր Իշխանասար գագաթը, որը գտնվում է Մեծ Իշխանասարից հյուսիս:

մայնքային իշխանությունն ուղղակի գործառնություններ չունի: Բայց և անհնար է պատկերացնել մի վիճակ, երբ համայնքային իշխանությունը կողքից հայեցողի դերում կլինի:

Եվ ուրեմն՝ ինչպե՞ս եք պատկերացնում համայնքապետարանի գործողությունները (այդ թվում՝ համագործակցությունը զինվորական կառույցների հետ)՝ տարածաշրջանի պաշտպանությունը կազմակերպելու ուղղությամբ:

Նորից պետք է նշեմ Սիսիանը ոչ թե սահմանամերձ, այլ բառի ուղիղ իմաստով սահմանապահ համայնք է: Համայնքապետը պաշտպանության բնագավառում օրենքով սահմանված կոնկրետ գործառնություն ունի: Սիսիան քաղաքում և մեր բոլոր գյուղական բնակավայրերում մինչև հիմա լուծված չէ ապաստարանների խնդիրը: Այդուհանդերձ, պաշտպանության բնագավառում համայնքապետի ամենակարևոր գործառնությունը, կարծում եմ, Սիսիան համայնքում նախ և առաջ աշխատատեղ ստեղծելն է, աշխատանքի եկամտաբերության աճին նպաստող պայմանների ձևավորումը, մարդկանց կյանքի որակի բարելավումը՝ ճանապարհների բարելավում, խմելու և ոռոգման ջրի կարգավորում, տանիքների վերանորոգում, միջհամայնքային տրանսպորտի հարցի լուծում, կոյուղի, ամենը, ինչ կապված է մարդու կյանքի որակի հետ: Միայն այդ դեպքում է հնարավոր ապահովել պայմաններ, որ մարդիկ չհեռանան համայնքից: Սիսիանը սահմանապահ համայնք է, ու սահմանը պահում է ոչ միայն դիրքապահ զինվորը, այլև համայն-


Նախիջևանի սահմանագլխին՝ Ադրթարան սրբազան լեռան գագաթին հայոց զինվորների տիրական ներկայությունն է:



ԱՍՏՈՒ ՏԱՃԱՐՆԵՐ, ՈՐՏԵՂԻՑ ՀՈԳԵՂԵՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐ ԵՆ ԲԻՈՒՄ



Թանահատի վանքը
Մատենագիտության մեջ նաև՝ Թանահատաց վանք, Թանահատի վանք, Թանատ, Թանատավանք, Թանատաց վանք, Թանատի, Թանատեի վանք, Թանատի անհանգստից վանք, Թանատի վանք, Կարմիր վանք, Ղըզըլ վանք: Գտնվում է Սիսիանի տարածաշրջանի Արևիս գյուղի մոտ, Որոտան գետի աջակողմյան վտակ Սիսիանի վերին հոսանքի շրջանում, գետի աջ ափին, բարձրադիր, տափարակ վայրում: Վանքի հիմնադրումը վերագրվում է 5-6-րդ դարերին:



Անգեղակոթի Սուրբ Աստվածածին եկեղեցի, հիմնադրվել է 17-րդ դարում, գտնվում է Անգեղակոթ գյուղում, այն գտնվում է Որոտան գետի ձախափնյա սարավանդի վրա՝ մարզկենտրոնից 108 կմ հս-արմ., ծովի մակերևույթից 1800 մետր բարձրության վրա:



Որոտնավանք (Վաղատնի վանք), միջնադարյան վանական համալիր Սիսիանի տարածաշրջանում: Գտնվում է Սիսիանից մոտ 14 կմ արևելք, Որոտանի կիրճի ձախակողմյան բարձունքի վրա: Հիմնադրվել է 1000 թվականին Սյունյաց թագուհի Շահանուրի կողմից:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԻ ԱՌԱՋԻՆ ԵՈՅԱԿԸ



Արա Չափարյան



Տիգրան Իվանյան



Իսկուհի Բաղդասարյան

ԱՊՐԵԼՈՒ ՍԻՍԻԱՆ. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՉԱՐԳԱՑՄԱՆ ԲՅՈՒՑԵ

Համայնքային բյուջեի եկամուտների մեծ մասը պետական դոտացիան է, սեփական եկամուտների տեսակարար կշիռը շատ ցածր է, ծախսերն առավելապես վարչական բնույթի են, ֆոնդային մասին հատկացվող միջոցների չափը բավարար չէ կապիտալ ծախսերն իրականացնելու անհրաժեշտ ծավալով:

Բյուջեի մեծությամբ Սիսիան համայնքը Սյունիքի մարզում 4-րդ տեղում է՝ Կապանից, Քաջարանից և Գորիսից հետո:

2018-2022 թթ. Սիսիանում իրականացված և դեռ չավարտված սուբվենցիոն 16 ծրագրի ընդհանուր չափը կազմում է Սյունիքի մարզին հատկացված սուբվենցիաների ընդամենը 10 տոկոսը: Մեկ շնչին բաժին ընկնող սուբվենցիոն միջոցների չափով Սիսիանը գիջում է Կապանին, Գորիսին, Քաջարանին, Մեղրուն, Գորայքին, մարզի 8 համայնքների մեջ 6-րդ տեղում է:

Սիսիան համայնքի առաջընթացի և առկա խնդիրների արդյունավետ լուծման համար անհրաժեշտ է գոյատևման բյուջեից անցում կատարել զարգացման բյուջեի, այսինքն՝ տեղական ինքնակառավարման համակարգի ռազմավարական նպատակադրում սահմանել Սիսիան համայնքի իրական զարգացումը:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՄԱՉԱՓ ՉԱՐԳԱՑՈՒՄ

Համայնքի առաջընթացի հիմքում տարածքային կայուն զարգացումն է: Գյուղական տարածքների թույլ զարգացվածությունը ձևավորում է սոցիալական դժգոհություն և դառնում տնտեսական հետամնացության ցուցիչ: Համայնքում զարգացում ապահովելու համար անհրաժեշտ է արդյունավետ տարածքային կառավարում տարածքների տեղակարգման հիմքով և համայնքային բյուջեի միջոցների արդար բաշխում մեկ բնակչի հաշվով: Բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման ցուցանիշների տեղակարգային դասակարգումը ցուցադրում է Սիսիան քաղաք-գյուղեր զարգացման խզումը: Խոշորացումից հետո Սիսիան քաղաքի զարգացման տեմպերի ավելացումն ի հաշիվ գյուղական բնակավայրերի հանգեցնում է տարածքային անհավասարության խորացմանը: Բնակավայրերի ֆինանսավորումն իրականացնելու ենթ ոչ թե ընդհանուր, այլ համահարթեցման սկզբունքով՝ ըստ բնակավայրերի պահանջարկի գործոնի, որպեսզի բացառեն Սիսիան քաղաքի կամ որևէ այլ բնակավայրի գերֆինանսավորումը մյուսների թերֆինանսավորման հաշվին: Բարելավելու ենթ բնակավայրերի բիզնես միջավայրի և գյուղացիական տնտեսությունների վարման պայմանները:

ԳՅՈՒՂԱՆՏԵՍԱԿԱՆ-ԶԲՈՍԱԾՐՁԱՅԻՆ ԿԼԱՍՏԵՐ

Սիսիան համայնքում առկա և հեռանկարային արտադրական արժեքի ձևերի և

զբոսաշրջային ներուժի համադրումը հնարավորություն է տալիս ձևավորել Սիսիանի գյուղատնտեսական-զբոսաշրջային կլաստեր, ինչը սիներգետիկ ազդեցությամբ կնպաստի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Կլաստերը ձևավորվում և հանդես է գալիս որպես արտադրության, մատակարարման և ծառայությունների մատուցման մեջ մասնագիտացած, նաև փոխկապակցված գործունեություններով կազմակերպությունների և աշխարհագրական հատկանիշով փոխկապակցված ընկերությունների խումբ, որոնք մրցակցում են իրար հետ, բայց և իրականացնում են համատեղ աշխատանք:

Սիսիան համայնքը կազմակերպելու ենթ որպես գյուղատնտեսական-զբոսաշրջային կլաստեր, որտեղ տնտեսական զարգացման գերակա ճյուղերն են լինելու գյուղատնտեսությունը, ագրովերամշակումը և զբոսաշրջությունը:

ՀՈՂԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Համայնքի հողային ֆոնդը հանրապետությունում ամենախոշորներից է, իսկ Սյունիքի մարզում մենք առաջին տեղում ենք: Այդուհանդերձ, համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի մոտ 2/3-ը, ըստ համայնքապետարանի պաշտոնական տեղեկատվության, չեն օգտագործվում:

Ապահովելու ենք հողերից օգտվելու հավասար և արդար պայմաններ բոլոր հողօգտագործողների համար: Կարգավորելու ենք հողերի կարգերի հետ կապված խնդիրը: Վերացնելու ենք հողաչափերի իրական և փաստաթղթային անհամապատասխանությունները: Վերանայելու ենք հողերի գոտիականության գործակցի և կարգի հիմքով հաշվարկվող հարկաչափերը և վարձաչափերը: Վերահաշվարկելու ենք հողի հարկի և վարձավճարների վճարային պարտավորությունները:

Լուծելու ենք գերավճարների և պարտքերի խնդիրը: Համաֆինանսավորելու ենք բարձրարժեք մշակաբույսերի, ինտենսիվ այգիների, հատապտուղների հիմնադրման ծրագրերը: Կազմակերպելու ենք բարձր վերարտադրության որակյալ սերմանյութի, պարարտանյութերի մատակարարումը և բերքի իրացումը:

ՆՈՐ ԳՅՈՒՂՏԵՆՆԻԿԱ

Համայնքում առկա աշխատանքային վիճակում գտնվող գյուղտնիկների մաշվածությունը 90 տոկոսից ավելի է, բնակչը՝ խիստ անբավարար, գյուղտնիկային հավաքակալային թարմացումը՝ չափազանց դանդաղ, 10 տարի շահագործման ժամկետով տրակտորների, թրթուրավոր տրակտորների, կերահավաք և հացահատիկահավաք կոմբայնների տեսակարար կշիռը՝ 98 տոկոս: Միայն բերքահավաքի փուլում գյուղացիների կորուստները գերազանցում են 30 տոկոսը, վարուցանքի օպտիմալ

ժամկետների խախտման արդյունքում 20 տոկոսը:

Համապատասխան գյուղատնտեսական արտադրության հաշվարկային ցուցանիշներով օպտիմալ ժամկետներում վարուցանքի և բերքահավաքի իրականացման համար Սիսիան համայնքում ստեղծելու ենք համայնքային մեքենատրակտորային կայան, ինչը կնշանակի նաև համայնքում մի քանի հարյուր բարձր վարձատրվող նոր աշխատատեղի ստեղծում, վարուցանքի և բերքահավաքի փոփոխում գյուղացիական տնտեսությունների կորուստների էական կրճատում:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ

Սիսիան համայնքում ներհամայնքային և միջհամայնքային տրանսպորտի խնդիրն իր բնույթով սոցիալական է: Ընթացիկ 2022 թվականին մի քանի ամիս հայտարարված մրցույթները չէին կայանում: Պատճառների թվում տրանսպորտային ընկերությունները նշում են երթուղիների ցածր եկամտաբերությունը՝ բնակիչների վճարունակությամբ պայմանավորված: Համայնքում տրանսպորտային սպասարկումն իրականացվելու է համայնքային ենթակայության տրանսպորտային ընկերության հիմնադրման և սուբվենցիոն ծրագրով անհրաժեշտ քանակի ժամանակակից ավտոբուսների ձեռքբերման միջոցով: Առաջնահերթ և հրատապ ծրագիր է, իրականացնելու ենք անմիջապես:

ՈՌՈՂՄԱՆ ՑԱՆՑԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ ԵՎ ԸՆԴԱՅՆՈՒՄ

Ոռոգովի բոլոր հողերի ընդհանուր մակերեսը, ըստ փաստաթղթերի, Սիսիան համայնքում կազմում է մոտ 3500 հա, իրականում ավելի քիչ է: Բոլոր բնակավայրերում առկա է ոռոգման ջրի սուր խնդիր, ոռոգման ցանցն արդիական չէ, մեծամասամբ մաշված, կառավարումն իրականացվում է անարդյունավետ: «Սյունիք» ՏՕԸ-ի Սիսիան տեղամասի կողմից ջրառի թույլտվության ծավալները բավարար չեն համայնքի գյուղացիական տնտեսությունների ջրի պահանջարկը բավարարելու և մշակաբույսերի ջրման օպտիմալ, անհրաժեշտ ժամկետները պահպանելու համար:

Ոռոգովի հողերի մակերեսն ընդլայնելու ենք, ներդնելու ենք ավտոմատ և արդիական ոռոգման համակարգեր, ապահովելու ենք ջրառի թույլտվությունների ծավալները բնակիչների ոռոգման ջրի իրական պահանջարկի հաշվարկային ցուցանիշի հիմքով:

ՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈՂՈՒՄ

Սիսիան քաղաքում բազմաբնակարան 85 շենքից ներկայում վերանորոգման կարիք ունեն 44 բազմաբնակարան շենքի տակիքը: 24 շենք՝ Գետափյան թաղամասում, 7 շենք՝ կենտրոնում՝ Իսրայել Օրի, Սիսական, Աղոնցի փողոցներում, և 13 շենք՝ Գայի թաղամասում՝ Շահուլյան, Սյանսիկյան և Գայի փողոցներում:

Բոլոր շենքերի տանիքները հիմնանորոգելու ենք: Սիսիան քաղաքում վերանորոգման ենթակա տանիքով բազմաբնակարան որևէ շենք այլևս չի լինելու:

ՃԱՆԱԴԱՐՅՆԵՐԻ ԲԱՐԵՎԱՐՈՒՄ ԵՎ ԴԱՅԴԱՆՈՒԹՅՈՒՆ

Սիսիան քաղաքում փողոցային կանոնավոր ցանցը ձևավորում են 22 համաքաղաքային նշանակության փողոցները, որոնց մի մասն անֆայտապատված և պատշաճ կահավորված չէ, բակային հատվածներում ճանապարհները համատարած բարեկարգման կարիք ունեն:

Իրականացնելու ենք ներհամայնքային ճանապարհների անֆայտապատման և բարեկարգման ծրագրեր բոլոր բնակավայրերում: Համայնքային ճանապարհային ցանցի կայուն կառավարում ապահովելու համար համայնքի տարածքում գրանցված փոխադրամիջոցների գույքահարկից գոյացող ֆինանսական միջոցներն ուղղելու ենք նպատակային նշանակությամբ՝ ճանապարհների բարեկարգում և պահպանություն:

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ

ՋՐԱՅԵՈՒՑՈՒՄ

Սիսիան համայնքում բնակիչներին մատակարարվող ջրի քանակի բավարարության պայմաններում բնակավայրերի մեծ մասում առկա է ջրամատակարարման խնդիր: Քաղաքի ներքին բաշխիչ ցանցը վերակառուցման կարիք ունի, ջրամատակարարման համակարգը չունի գոտևորում համապատասխան ջրընդունիչ կայաններով: Գյուղական բնակավայրերի մեծ մասում տույն խնդիրն է՝ կապված ջրամատակարարման ներքին ցանցերի անբավարար տեխնիկական վիճակի և ջրի որակի հետ:

Համայնքի գյուղերում, առանձին բացառություններով, կոյուղի գոյություն չունի: Սիսիան քաղաքի կոյուղատար ցանցը կառուցվել է խորհրդային տարիներին, տեխնիկական վիճակը խիստ անբավարար է: Գործող կոյուղու կոլեկտորների և հավաքող խողովակաշարերի մաշվածության և լցվածության մակարդակը բարձր է:

Բոլոր բնակավայրերում իրականացնելու ենք ջրամատակարարման և ջրահեռացման

Ապրելու երկիրը սկսվում է համայնքներից

Մենք համոզված ենք՝ հզոր և զարգացած պետության հիմքը հզոր և զարգացած համայնքներն են: «Ապրելու երկիր» կուսակցությունն իր քաղաքական գործունեությունը սկսել է համայնքներից՝ հրատապ խնդիրների լուծումը տեսնելով հենց համայնքներում...

Ստեղծումից արդեն օրեր անց կուսակցությունը սկսեց իր ակտիվ մասնակցությունը 2021 թ. հոկտեմբերին և դեկտեմբերին տեղի ունեցած ընտրություններին: Արդյունքում մասնակցելով 15 համայնքում, «Ապրելու երկիրը» 13 համայնքում ունի ավագանու 40 անդամ:

Նոյեմբերյան համայնքում կուսակցությունը ստանձնել է համայնքի ղեկավարումը, Տաթև համայնքում իրականացվում է համատեղ կառավարում:

Փարաբար համայնքում կուսակցությունը հավաքել է 49% ձայն:

ՆԱԽԵՎԱՐԱԳ՝ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ



Մենք կարևորում ենք համայնքների արագ և արդյունավետ զարգացումը: Այդ նպատակով գործադրում ենք մեր և մեր գործընկերների ջանքերը՝ լուծելու համայնքների առջև ծառայած խնդիրները, ինչպես նաև իրականացնելու նոր ծրագրեր՝ համայնքները գրավիչ դարձնելու ուղղությամբ: Մասնավորապես, Նոյեմբերյան համայնքին «Ապրելու» հիմնադրամը նվիրաբերել է 120 մլն դրամ՝ սուբվենցիոն ծրագրերի իրականացման համար: Տաթև համայնքին «Ապրելու» հիմնադրամը նվիրաբերել է 110 մլն դրամ՝ սուբվենցիոն ծրագրերի իրականացման համար: Մենք շարունակելու ենք մեր առաքելությունը և պատրաստ ենք ստանձնել ձեր համայնքի կառավարման պատասխանատվությունը՝ այն դարձնելով ուժեղ, զարգացած և բարեկեցիկ՝ հանուն մեր միասնական հայրենիքի:



ցանցերի, ջրընդունիչների և կոյուղահորերի վերանորոգման ու կառուցման ծրագրեր:

ԱՊԱՏԱՐԱՆՆԵՐ

Համայնքի բնակավայրերում փաստացի չկան ապաստարաններ: Սիսիան քաղաքում, գլխավոր հատակագծով, որպես ապաստարանների տեղակայման վայրեր են հավաստանշված 3 բնակելի բազմաբնակարան շենք, թիվ 1-ին միջնակարգ դպրոցը, հացի, սննդի կոմբինատները, բուժգործիքների գործարանը, տրիկոտաժի ֆաբրիկան: Փաստաթղթով ապաստարաններ նախատեսված են նաև գյուղական բնակավայրերում: Համայնքը, սակայն, փաստացի չունի ապաստարաններ: Խնդիրն արդիական է ու հրատապ, լուծելու ենք ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հետ համագործակցության շրջանակներում:

ԽԵՆԱՑԻ ՄԱՆԿԱԴԱՐՏԵՋՆԵՐ ԵՎ ԴԴՐՈՑՆԵՐ

Համայնքի բոլոր բնակավայրերում երեխաները պետք է հնարավորություն ունենան մանկապարտեզ հաճախելու և նախադպրոցական կրթություն ստանալու: Արդիականացնելու ենք համայնքային ենթակայության ՆՈՒՀ-երի նյութատեխնիկական բազան: Ժամանակակից աշխարհում վաղուց արդեն երեխաներին հասանելի են խելացի տեխնոլոգիաները՝ ինտերակտիվ գրատախտակներ, հատակներ, հայելիներ, ֆիզկուլտուրայի ու «Խաղա և զարգացիր» ուսումնական համալիրներ: Նոր սերնդի համար ապահովելու ենք անհրաժեշտ պայմաններ, որ մեր երեխաները մանկապարտեզներում իսկապես ապահովված լինեն որակյալ ու ժամանակակից նախադպրոցական կրթության պայմաններով: Նույն տրամաբանության մեջ ներդրումներ ենք անելու երաժշտական, պարի և գեղարվեստի դպրոցներում, ստեղծելու ենք մարդկանց կյանքի բարձր որակը ձևավորող անհրաժեշտ բոլոր պայմաններով միջավայր: Լուծելու ենք մանկապարտեզներում հերթերի խնդիրը:



ԱԳՐՈՒՈՑԻՍԻՆԿ ԿԵՆՏՐՈՆ

Գյուղմթերքների վրա հեշտությամբ են ազդում շուկայի պահանջարկն և առաջարկը, որտեղ պահանջարկը գրեթե կայուն է, սակայն առաջարկը խիստ անկայուն, չկա անկայունության նվազեցման կառավարում: Այս իրավիճակը հանգեցնում է բարձր ռիսկերի համայնքի ագրոբիզնես ներդրողների համար, խնդիրներ ստեղծում գյուղմթերքի իրացման առումով: Ագրոդիստիկ ընկերությունն ապահովելու է ժամանակակից գյուղատնտեսության համար մոնիտորինգի և կառավարման հարթակ, կնքելու է տարեկան պայմանագրեր գյուղացիական տնտեսությունների հետ՝ ներկայացնելով արտադրական ծրագրեր, տեխնիկական աջակցություն և մատակարարելով որակյալ նյութեր՝ ավելի մատչելի գներով: Լոգիստիկ ընկերությունը նվազեցնելու է շուկայում գյուղմթերքի պահանջարկի անորոշությունը, հետևաբար և համայնքային ագրոբիզնեսում ներդրողների ռիսկը:

ԿԵՆՏՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

Համայնքի բոլոր բնակավայրերում առկա է կենցաղ-մշակութային սպասարկման ցանցի վերակառուցման խնդիր: Կենցաղի և մշակույթի տների արդիականացումը չի սահմանափակվելու շենքային, գույքային պայմանների բարելավումով: Մեր խնդիրը ոչ թե շենքերի վերանորոգումն է, այլ բնակավայրերում սպասարկման ծառայություններ մատուցող բիզնեսի զարգացումը, առանց որի համայնքը չի կարող կայանալ որպես գյուղատնտեսական-զբոսաշրջային կլաստեր:

Ներկայացված նախագծերի վերջնական արդյունքը համայնքի բնակավայրերում նոր աշխատատեղերի ստեղծումն է, բիզնես միջավայրի բարելավումը և համայնքի բնակիչների համար կյանքի բարձր որակի ապահովումը: //

Ի դեմս «Ապրելու Երկիր» կուսակցության Սիսիանն ունի լուրջ գործընկեր և բարեկամ



ՄԱՆԵ ԹԱՆԴԻՆՅԱՆ
«Ապրելու Երկիր» կուսակցության համահիմնադիր, նախագահ

Սիսիան համայնքի սիրելի հայրենակիցներ Այս օրերին, երբ ընթանում է Սիսիան համայնքի ավագանու ընտրությունների քարոզարշավը, ձեզ են մոտենում բազմաթիվ քաղաքական ուժերի թեկնածուներ, ընտրապայքարին միացած ձեզ հարագատ, ծանոթ և ոչ այդքան ծանոթ մարդիկ, Դուք ակամայից հայտնվում եք բարդ ընտրության առջև՝ ու՛մ ընտրել և ի՛նչու:

Կասկած չունենեմ, որ սիսիանցի ունի բավարար իմաստնություն, իրերն ու երևույթները գնահատելու և դրանց հիման վրա որոշումներ կայացնելու կամք: Սակայն մի բանի գաղափարով ուզում եմ կիսվել ձեզ հետ:

Ընտրեք ոչ թե «ծանոթով», այլ արժանիին: Մի վստահեք ձեր երեխաների ճակատագիրը ձեզ լավ ծանոթ ձախողակներին:

Ընտրեք ձեր սրտի և խղճի մտքը՝ վստահելով ձեր տրամաբանության թելադրանքին, ոչ թե՛ այլոց: Դուք լավագույնս գիտեք՝ ինչ է պետք ձեզ և ձեր ընտանիքին:

Ընտրեք անկեղծությունը և նվիրվածությունը Սիսիան համայնքին, նրան, ով սիրում է ձեր համայնքը, ոչ թե՛ համայնքապետի պաշտոնը: մարդը պետք է հզորացնի պաշտոնը, այլ ոչ թե՛ պաշտոնը մարդուն:

Ընտրեք խելքն ու գործունակությունը,

ինչը զարգացման միակ գրավականն է: անխելքությունն ու անգործունակությունն են Սիսիան համայնքը հասցրել թշվառության:

Ընտրեք Սիսիանի համար լավագույն Նոր շանսը և ազատվեք համայնքն ու ձեր հույսերը ձախողած յուրաքանչյուրից, ով հնարավորություն ունեցել է ու չի արել: Շանս սովորե՛ք մեր սիրելի Սիսիան համայնքին:

Վստահ եմ՝ ինձնից էլ լավ գիտեք՝ Սիսիանին, որը կթափվի է բազմաթիվ սոցիալ-տնտեսական խնդիրների, անվտանգային բարդագույն մարտահրավերների առջև, պատասխանատու, խնդիրներ լուծելու հարցում հմտացած ու կարող մարդիկ են պետք, իրենց հող ու ջրին նվիրված անձինք:

Որպես «Ապրելու Երկիր» կուսակցության նախագահ՝ ուրախ եմ, որ Սիսիանը զարգացնելու համար մենք կարողացել ենք գտնել այդպիսի մարդկանց՝ Սիսիան համայնքի նվիրյալ հայրերին:

Ձեր համայնքում մեր կուսակցությունը համայնքի ղեկավարի թեկնածու է առաջադրել:

րել Արա Չաբարյանին: Ծանոթացե՛ք նրա կյանքի ուղուն ու գործունեությանը, հարցեր տվեք և լսե՛ք նրա պատասխանները, ծանոթացե՛ք նրա պատկերացրած Սիսիան համայնքին: Ու ձեր որոշումը դրանից հետո, անկասկած, Սիսիանն ապրելու համայնք դարձնելու օգտին է լինելու: Ուզում եմ իմանա՞ք, որ «Ապրելու Երկիր» կուսակցությունը կանգնած է իր թեկնածուների թիկունքին, իսկ նրանց հաղթանակն ապահովելու է ձեր համայնքի կայուն և անշեղ զարգացումը մեր լիարժեք աշակցության ներքո:

Յուսով եմ, որպես էլ ինձ նման, ամեն բան անելու եք, որ Սիսիան համայնքը դառնա **ԱՊՐԵԼՈՒ ԳԱՍԱՅՆԷ**, որովհետև **ՏԵՂԱԿ ԵՆԷ, ԿԱՐՈՂ ԵՆԷ, ԿԱՆԵՆԷ:**



ԱՐԱՄ ՍՏԵՓԱՆՅԱՆ
«Տառնի» հանրային ջրերի գործարանի սեփականատեր

Ողջունում եմ Արա Չաբարյանի առաջադրումը և անկեղծորեն աջակցում նրան: Արամ երիտասարդ է, իսկ երիտասարդ լինելը նորարարական գաղափարների իրագործման առաջին նախապայմաններից է: դանդաղ ու պահպանողական քայլերով այսօրվա իրականության մեջ առաջընթաց չես գրանցի:

Սերում է հարգված ընտանիքից: Զայրը ղեկավարել է մի շարք հիմնարկներ, եղել է լավ կազմակերպիչ, հարգված համագյուղացի է, լավ ընկեր: հատկանիշներ, որոնք փոխանցվել են որդուն: Արամ համեստ է, պարկեշտ, նվիրվող, հայրենասեր, մարդ, ով կապված է իր հող ու ջրին և փորձում է նպաստել իր երկրի առաջընթացին:

Ես վստահում եմ Արային: Անպայման մասնակցելու եմ ընտրություններին, ինչը մինչ այդ չեմ արել: Նախ՝ գիտեմ, որ ձայնս տեղ է հասնելու, և երկրորդ՝ համոզված եմ՝ Արամ գալիս է ոչ իր փառքի համար: Գիտեմ՝ հետագայում Սիսիան համայնքի կյանքն ավելի լավը դարձնելու ուղղված մեր առաջարկներն էլ հաշվի կառնվեն: Մենք պատրաստ ենք մեր մասնակցությունն ունենալ սուբվենցիոն ծրագրերին՝ ներդրման տեսքով: Զայրենիքի զարգացման որևէ հնարավորություն անտեսել չենք կարող: Զաջողություն եմ մաղթում Արա Չաբարյանին թե՛ ընտրություններում, թե՛ հետագա աշխատանքում: Կոչ եմ անում ընտրել Սիսիանի զարգացման ուղին:



ՄԱՐՄԱՏ ԱՍԼԱՆՅԱՆ
«Սիսիանի Նորոզին» ԲԲԸ սեփականատեր

Արա Չաբարյանին ճանաչում եմ որպես կազմակերպված, պատասխանատու, հավասարակշիռ, նպատակասլաց ու խելացի անձնավորություն: Եղել է ավագանու անդամ, տիրապետում է համայնքային տնտեսությանը, պատկերացում է համայնքային իշխանության գործառնությունն ու անելիքները: Վստահ եմ՝ ունի նաև խնդիրների լուծման բանալին, այլապես չէր առաջադրվի:

Արային ընտրելով՝ համայնքի բնակիչները կարող են վստահ լինել, որ իրենց բարձրագույն հարցերը կստանան համապատասխան լուծումներ:

Կոչ եմ անում սիսիանցիներին՝ վստահել Արային և հավատալ, որ «ԱՊՐԵԼՈՒ ՍԻՍԻԱՆԻ» հիմքերն ամուր են լինելու, բանի որ շաղախված են հայրենասիրությամբ ու նվիրումով:

«Եթե Սիսիանը կռվի և նրան հետևեն Գորիսն ու Դավանը, ապա Չանգեզուրը կանգուն կմնա, հետևապես կանգուն կմնա նաև Դարաբաղը»։ Չորավար Անդրանիկի խոսքն այսօր էլ հրատապ է, և դա, համոզված եմ, ամենայն լրջությամբ է գիտակցում Արա Չաբարյանի գլխավորած թիվը:

Մենք կանգուն պիտի մնանք նաև մեր համայնքների զարգացմամբ, մեր մշակութային ժառանգության և ինքնության պահպանմամբ:



ԱԼԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ
Երգիչ

18 տարվա ընկերությունն է կապում ինձ Արայի հետ: Չնայած հեռավորությանը՝ մշտական կապի մեջ ենք եղել: Արամ ուշադիր, հուսալի, կամեցող ընկեր է, մարդկային բարձր արժեքներ կրող անձնավորություն, լավ ծնողների ճիշտ դաստիարակած զավակ: Միշտ սիրել է խոսել մեծ ծրագրերից, և այդ ծրագրերի առանցքում Սիսիանն է եղել: Երբեք չեմ զգացել, որ Սիսիանից դուրս գործունեություն ծավալելու ցանկություն ունենա, թեպետ դրա հնարավորությունները միշտ ունեցել է: Թե՛ արտաքին տեսքը, թե՛ մտածելակերպը, մոտեցումներն ու աշխարհայացքը, թե՛ նիստուկացն ու գործելակերպն առանձնացող են, վստահություն ներշնչող: Ունի լսելու, քննարկելու, նաև արագ կողմորոշվելու ու վճռական գործելու կարողություն:

Ես Արայի կողքին եմ, որովհետև նա երբեք ավելորդ քայլ չի անի, գիտի, թե ուր է գնում: Ես Արայի կողքին եմ, որովհետև վստահություն ունեմ, որ վաղն ավելի լավ է լինելու:

Զաջողություն եմ մաղթում Արային: Նրա հաջողությունը, հավատացե՛ք, Սիսիանի ու սիսիանցու հաջողությունն է:



ԷՄՄԱ ԶԱԿՈՒԲՅԱՆՅԱՆ
Արա Չաբարյանի ուսուցչուհի

Արա Չաբարյանը սովորել է Սիսիանի թիվ 3 միջնակարգ դպրոցում՝ մի հրաշալի դասարանում, և աչքի էր ընկնում գերազանց առաջադիմությամբ: Աշխատասեր, նպատակասլաց, կազմակերպված երիտասարդ էր:

Ի՞նչն է ուշագրավ. նա օժտված էր շրջապատը ղեկավարելու ձիրքով, համադարձակալ միջոցառումների անցկացման կենտրոնում մշտապես ինքն էր: Մինչև հիմա իմ մեջ տպավորված է նրա կազմակերպչական ջիղը: Երկու կարծիք չի կարող լինել, որ նրա այդ արժանիքն օգտակար կլինի համայնքապետի թեկնածուի առաջիկա ծրագրերի իրականացման ճանապարհին: Կարծում եմ՝ Արա Չաբարյանը, հանրապետության սոցիալ-տնտեսական այս դժվարին վիճակից ելնելով, կարող է արդյունավետ կառավարել Սիսիան համայնքը, և իր նպատակասլաց ծրագրերով Սիսիանը կհասցնի ցանկալի մակարդակի: Կոչ եմ անում սիսիանցի ընտրողին՝ իր վստահության քվեն տալ Արա Չաբարյանին, որպեսզի առաջիկա տարիներին ղեկավարի Սիսիան խոշորացված համայնքը՝ իր խելամիտ և հավասարակշռված ծրագրերը կյանքի կոչելու համար:

ՄԵՐ ԹԵԿՆԱԾՈՒՆ Արա Չաբարյանն է



ԱՐԱ ՉԱՔԱՐՅԱՆ. «Սիսիանը սահմանապահ համայնք է, ու սահմանը պահում է ոչ միայն դիրքապահ զինվորը, այլև համայնքում ապրող յուրաքանչյուր ոք»

Սկզբը՝ էջ 3

քում ապրող յուրաքանչյուր ոք:

– Սիսիան համայնքի բազմաթիվ գյուղեր, անկեղծ լինելը, հոգեվարք են ապրում, ավելի ստույգ՝ նրանց վաղվա օրը վտանգված է...

Ունե՞ք պատկերացում, թե ինչպես կարելի է կազմակերպել տարածաշրջանի լեռնային գյուղերի փրկությունը կամ (առնվազն) հոգեվարքի կասեցումը:

Ի՞նչ էք կարծում՝ համայնքների խոշորացումը (Սիսիանի օրինակով) ողջամիտ ճանապարհ է, թե՞...

– Սիսիանում ճիշտ է, արդեն այսօր ունենք մեկ տասնյակից ավելի ուրվական գյուղեր՝ 36-ից, բայց դեռևս կենդանի գյուղերն էլ դատապարտված կլինեն, եթե թողնենք այսպես շարունակվի: Համայնքում համաչափ տարածքային զարգացում պետք է ապահովել՝ բնակավայրերի միջև քյուլեթի միջոցների արդար բաշխման միջոցով: Առանց արդար կառավարման և համաչափ տարածքային զարգացման՝ խոշորացումն ինքնանապատակ է դառնում:

– Մենք խոսեցինք գյուղապահպանության մասին, բայց այլ խնդիր է գյուղատնտեսությունը:

Սիսիանը, իր բացառիկ արոտավայրերով, ալպական մարգագետիններով եզակի տարածաշրջան է հանրապետությունում: Մինչդեռ այդ ռեսուրսները, հատկապես անկախության տարիներին, արդյունավետ չեն օգտագործվում տարբեր պատճառներով:

Չե՞ք կարծում, որ բնական այդ հարստությունը պետք է խելամոտեմբե օգտագործել և ի շահ համայնքի:

– Սիսիանը տարածքով ամենամեծ համայնքն է Սյունիքի մարզում և, ընդհանրապես, հանրապետությունում: Դուք իրավացի եք, մեր համայնքին բաժին է ընկնում մարզի ընդհանուր արոտների և վարելահողերի կեսից ավելին: Ինչ ասես՝ ունենք՝ հող, ջրամբարներ, գետեր, հանքային աղբյուրներ, մետաղական և ոչ մետաղական հանքավայրերով հարուստ ընդերք: Այդուհանդերձ, համայնքի բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է, և այն գերակա ոլորտ է մեր ծրագրում: Առաջնահերթություն է մեքենատրակտորային համայնքային կայանի ձևավորումը, գյուղարտադրանքի իրացմամբ զբաղվող ագրոլոգիստիկ ընկերության հիմնադրումը, հողերի չափի, կարգերի հար-

ցի կարգավորումը, բոլորի համար հողօգտագործման հավասար պայմանների ապահովումը, արոտների կայուն կառավարման, անասնապահության, դաշտավարության ու ինտենսիվ այգեգործության զարգացման ծրագրերի իրականացումը:

– 2020 թ. պատերազմից օրեր առաջ մեր ստեղծագործական խումբն այցելեց Լեռնաշեն և բարձրացավ Տատնա ձորով դեպի վեր... Հրաշք բնաշխարհ է, բայց պարզվում է, որ բնության այդ անարատ անկյունում նույնպես, չնչին գումարով, հանքարդյունաբերություն է կազմակերպվում, որը ռիսկեր է պարունակում այդ վայրերի խմելու և հանքային ջրերի համար: Եվ դա, բնապահպանական տեսակետից, միակ խնդիրը չէ Սիսիանի տարածաշրջանում: Դուք կկարողանա՞ք շրջակա միջավայրի անաղարտության խնդիրը պահել համայնքապետարանի ուշադրության կենտրոնում:

– Սիսիանում հիմա արդեն մի քանի հանքարդյունաբերական ընկերություններ կան, որոնք լեռնահատկացման ակտերով դեռևս չչահագործվող, այդ թվում՝ ոսկու, մոլիբդենի հանքերի սեփականատեր են: Հողօգտագործման թույլտվությունների տրամադրումն իրականացվում է հանրային լուսնետրով: Կարծում եմ՝ նման հարցերը պետք է լուծվեն ստեղծական հանրաբավելով: Մարդիկ պետք է իրապես տեղեկացված լինեն, քանի որ ցանկացած գործունեություն այդ բնագավառում սիսիանցու համար պետք է շահավետ լինի, իսկ շրջակա միջավայրի համար՝ անվտանգ:

– Սիսիանը Սյունյաց աշխարհի բազմաթիվ մեծերի բնօրրանն է՝ Շաղատի վարդապետարանի բերթողներից մինչև Հովհան Որոտնեցի ու Լիկոդայոս Ադոնց, Մորուս Հասրաթյան ու Համո Սահյան...

Ասե՛ք է թե՛ հոգևոր-մշակութային հարուստ ավանդույթներ ունեցող Սիսիանը պարտավոր է ունենալ մշակութային հարուստ ներկա: Ձեր մտածումներն այդ ուղղությամբ...

– Սկսելու ենք մանկապարտեզներից, որոնք համայնքային ենթակայության ներքո են: Արդիականացնելու ենք ԼՈՒՀ-երի կյուրատեխնիկական բազան՝ խելացի տեխնոլոգիաներով վերազինման ծրագրի շրջանակներում՝ ինտերակտիվ գրատախտակներ, հատակներ, հայելիներ, ֆիզկուլտուրայի ու «Խաղա և զարգացի» ուսումնական համալիրներ: Նոր սերնդի համար ապահովելու ենք

Այցեքարտ

Արա Արտավազի Չաքարյան, ծնվել է 1984 թվականին Սիսիան քաղաքում: Սովորել է տեղի N 3 միջնակարգ դպրոցում: Ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի «Փոխադրումների կազմակերպում և կառավարում ավտոմոբիլային տրանսպորտում» ֆակուլտետը:

Մասնակցել է դասընթացի, ստացել մաթեմատիկական մասնագետի լրացուցիչ որակավորում: Ծառայել է ՀՀ զինված ուժերում: 2016 թ. առավելագույն քվեով ընտրվել է Սիսիան համայնքի ավագանու անդամ:

Չբաղեցրել է պատասխանատու պաշտոններ մասնավոր ընկերություններում: Մասնավորապես՝ ԱՄԲՄ մաթեմատիկական կազմակերպությունում եղել է աշխատակազմի ղեկավար (2010-2012 թթ.), այնուհետև՝ փոխտնօրեն (2012-2014 թթ.):

2012-2019 թվականներին աշխատել է «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ընկերությունում՝ Սիսիանի տարածաշրջանի վաճառքի կետի պատասխանատու:

2014 թվականից մինչև այժմ «ԳՐԱՆԴ ԶԵՆԴԻ» ընկերության Սիսիան-Գորիս սպասարկող բազայի տնօրենն է: Ամուսնացած է, ունի մեկ որդի:

2012-2019 թվականներին աշխատել է «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ընկերությունում՝ Սիսիանի տարածաշրջանի վաճառքի կետի պատասխանատու:

2014 թվականից մինչև այժմ «ԳՐԱՆԴ ԶԵՆԴԻ» ընկերության Սիսիան-Գորիս սպասարկող բազայի տնօրենն է: Ամուսնացած է, ունի մեկ որդի:

2012-2019 թվականներին աշխատել է «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ընկերությունում՝ Սիսիանի տարածաշրջանի վաճառքի կետի պատասխանատու:

2014 թվականից մինչև այժմ «ԳՐԱՆԴ ԶԵՆԴԻ» ընկերության Սիսիան-Գորիս սպասարկող բազայի տնօրենն է: Ամուսնացած է, ունի մեկ որդի:

2012-2019 թվականներին աշխատել է «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ընկերությունում՝ Սիսիանի տարածաշրջանի վաճառքի կետի պատասխանատու:

2014 թվականից մինչև այժմ «ԳՐԱՆԴ ԶԵՆԴԻ» ընկերության Սիսիան-Գորիս սպասարկող բազայի տնօրենն է: Ամուսնացած է, ունի մեկ որդի:

2012-2019 թվականներին աշխատել է «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ընկերությունում՝ Սիսիանի տարածաշրջանի վաճառքի կետի պատասխանատու:

2014 թվականից մինչև այժմ «ԳՐԱՆԴ ԶԵՆԴԻ» ընկերության Սիսիան-Գորիս սպասարկող բազայի տնօրենն է: Ամուսնացած է, ունի մեկ որդի:

2012-2019 թվականներին աշխատել է «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ընկերությունում՝ Սիսիանի տարածաշրջանի վաճառքի կետի պատասխանատու:

2014 թվականից մինչև այժմ «ԳՐԱՆԴ ԶԵՆԴԻ» ընկերության Սիսիան-Գորիս սպասարկող բազայի տնօրենն է: Ամուսնացած է, ունի մեկ որդի:

նույնիսկ անծանոթ է հանրության լայն շրջաններին: Չե՞ք կարծում, որ զբոսաշրջությունը կարող է լրջագույն ուղղություն դառնալ տարածաշրջանի հետագա զարգացման ճանապարհին:

– Սիսիանի զբոսաշրջային ռեսուրսները խոշոր հաշվով մինչև հիմա զույգազույգ չեն, նաև այդ հարավային զբոսաշրջային երթուղու ամենաերկար հատվածն ունեցող Սիսիանի զբոսաշրջային եկամուտները բազմակի զիջում են հարևան Գորիս, Տաթև և մարզի մյուս բոլոր համայնքներին: Զբոսաշրջությունը մեզ համար գերակա ճյուղ է: Սիսիան համայնքը մեծ ներուժ ունի դառնալու ներգնա և միջազգային զբոսաշրջային պահանջարկված ղեկավարող, համայնքային զբոսաշրջության կենտրոն, ինչի համար անհրաժեշտ է իրականացնել համայնքի զբոսաշրջային գոտևորում և էկոպոլիս-գյուղերի զբոսաշրջային գոտիների տարածքների բարեկարգում, կահավորում: Սիսիան համայնքը՝ մեր ծրագրով, նախատեսվում է կազմակերպել որպես գյուղատնտեսական-զբոսաշրջային կլաստեր:

– Սիսիանի տարածաշրջանը, ճակատագրի կամոք, վերածվում է ճանապարհաշինական մեծ հրապարակի: Հիմա Շամբ-Լծեն-Տաթև շրջանցող ճանապարհն է կառուցվում, որոշ ժամանակ անց կսկսի Հյուսիս-հարավի Սիսիան-Քաջարան հատվածի կառուցումը...

Դա, ըստ ելույթի, շանս է տարածաշրջանում նոր ենթակառուցվածքներ ստեղծելու, տնտեսվարողների և աշխատուժի առկա ռեսուրսներն ավելի արդյունավետ օգտագործելու համար:

Համայնքային իշխանությունը, Ձեր ընտրվելու դեպքում, կկարողանա՞ այդ ամենը ծառայեցնել տարածաշրջանի զարգացմանը:

– Սիսիանն իրապես բոլոր հնարավորություններն ունի միջազգային-տարածաշրջանային նշանակության բազմամիլիարդանոց ճանապարհաշինական նախագծերի իրականացման շնորհիվ թռիչքաձև աճ ապահովել: Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի ներդրումային ծրագիրը Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի մաս է, որ հաստատվել է 2021 թ. սեպտեմբերին՝ կառավարության որոշմամբ: Մինչև մեկ միլիարդ դոլար նախական արժեքով 50 կմ երկարությամբ ճանապարհի շինարարական աշխատանքների իրականացման հաշվարկային ժամկետը կազմելու է 6 տարի: Նախատեսված է, որ մինչև այս տարվա ավարտ ընտրվեն հիմնական կապալառուները: Համայնքապետն ընտրվում է 5 տարի ժամկետով, կարծում եմ՝ սիսիանցիները կնախընտրեն այդ տարիներին ունենալ գործունակ, արդյունավետ աշխատող համայնքային իշխանություն: Սիսիանի համայնքապետարանը պետք է որ մինչև հիմա մտածած լինեք այդպիսի մեզանախագծերի մեջ Սիսիան համայնքի ներգավման ռազմավարական ծրագիր մշակելու մասին:

– Վերադառնալու նախընտրական գործընթացներին...


Եթե, ասենք, Ձեր քաղաքական թիմը սեպտեմբերի 25-ին չստանա քվեարկությանը մասնակցած ընտրողների կեսից ավելի ձայները, մրցակիցներից ո՞ր մեկի հետ կզնայք դաշինքի:

– Այդ մասին խոսելը ժամանակավրեպ էմ համարում մի քանի հանգամանքների պատճառով: Անձնական հարթությունում որևէ մեկի հետ խնդիր չունենք, բոլորն էլ մեր սիսիանցիներն են, բայց ունենք համայնք՝ հիմնականում բաժանված իրար հետ հակամարտող քաղաքական ճամբարների: Հուսով եմ մարդիկ նաև այդ պատճառով կընտրեն մեր թիմին, որպեսզի վերջ տան այս անիմաստ և անհասկանալի սև ու սպիտակի բաժանմանը, ու Սիսիանը կվերագտնի իր միասնությունը: Մեզ համար կարևոր են նաև տվյալ թեկնածուի, նրա քաղաքական թիմի ծրագիրը, անցած ուղին, անկեղծությունն ու գործունակությունը: Ներքին համոզմունք ու վստահություն ունենալ սիսիանցիներին իմաստուն ժողովուրդ են, սեպտեմբերի 25-ին ընտրողներն այդ խնդիրը կլուծեն, չեն թողնի ապագային:

– Դարո՞ն Չաքարյան, շնորհակալություն հետաքրքիր գրույցի համար Ձեզ՝ հաջողություններ:

ՀԱՐՑԱԾՈՐՈՒՅՑԸ՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

ՃԱԳԵՆԻ ԿԴՉԱՅԵՐԴ



Ք.Սիսիան, Սիսան Նահապետի հրապարակը

Սիսիանը արոտավետ սարեր ունի ու ցորենաշատ լեռնահովիտներ: Երկնքի համը դաշտերին բերող ջրեր ունի ու կիրճերի մամռահողը երկինք տանող արահետներ:

Լեռների գագաթները յոթերորդ երկնքի մեջ են, խարիսխները՝ վիհավոր անտակ կիրճերում:

Տարվա բոլոր եղանակները ապրում են իրար հարևանությամբ: Օգոստոսին, երբ մինչև անգամ տարին երաշտ է կարող ես լեռնագագաթներից դեղապետի ձյուն բերել, հունվարին մանուշակ ու կակաո քաղել կիրճերի հատակին:

Ցից քարեր բնակավայրը, որն առջև էր Է շրջվեմտրոնին՝ Սիսիան քաղաքին, 4-6 հազար տարվա պատմություն ունի: Ամեն անգամ, երբ այդ բնակավայրն են մտնում, ինձ թվում է, թե տեսնում եմ նրա բնակիչներին, վիթխարի ժայռաբեկորները ձորից ձորաբերան հանող շինարարներին, տեսնում եմ նրանց, լսում նրանց ձայները, խոսում նրանց հետ նախնական մի լեզվով և դառնում նրանց ժամանակակիցը: Երբ դուրս եմ գալիս այնտեղից, ինձ զգում եմ ոչ թե յոթանասուն, այլ յոթ հազար տարեկան: Եվ նրանք էլ, այդ քաղաքի բնակիչներն ու շինարարները հետս գալիս մտնում են այսօրվա Սիսիան քաղաքի քարտաշների, որմնադիրների և ճարտարապետների կերպարների մեջ և դառնում են մեր ժամանակակիցները:

Պատմական հուշարձանները շատ են Սիսիանում: Ժայռերի գանգախոռոչներում ծվարած բերդեր, բլուրների թամբին նստած վանքեր, ժողովրդյան հանճարի ուրիշ վկաներ... Եվ Սիսիանն էլ իմ բնաշխարհն է, իմ ծննդավայրը, ամեն քարը իմ հոգու մի բեկորն է, ամեն պտղունց հողը՝ իմ սրտի մի մասունքը: Բոլորն իմ մեջ են, բոլորի մեջ ես եմ...

Եվ, սակայն, ամենից շատ սիրում եմ Սիսիանի մարդկանց, սիսիանցիներին, մարդիկ, որ օգտվել գիտեն ժամանակակից քաղաքակրթության բոլոր բարիքներից և պահպանել գիտեն նախնիների լավագույն սովորույթները: Սիրում եմ նրանց աշխատասիրությունը, տիրոջական զգացումը հողի նկատմամբ, համեստությունը, ամոթխածությունը, պարզամտությունը:

Առուկուպից, առուծախից, առուփախից փախած այդ մարդիկ եթե գլխիդ սպիտակ

մազ են տեսել, ոտքի կկանգնեն, եթե նստած են, եթե կանգնած են՝ գլխարկները կհանեն: Դիրքը այստեղ դեր չունի, որոշողը տարիքն է: Նրանք հացի պատառը գետնին չեն գցի, գետնին հացի պատառ տեսնեն, կառնեն կփշրեն, կոնեն քարին, որ թռչուններն ուտեն: Հացը մեղք է, հացը սուրբ է՝ կասեն:

Աչքերդ առան երեսին, եթե աղչիկ է, այտերդ որդան կարմիր կդառնան, եթե տղա է, կշփոթվի, աչքերդ գետնին կխոսարհի, կանցնի: Հետո հետ կդառնա կնայի:

Սիրելի, սիրելի սիսիանցիներ, ինչքան բան ունի այս խառնիխուռն, այս ամբարտավան ժամանակների մարդը ձեզանից սովորելու: Ձեր չկորցրածը, ձեր պահպանածը Նահապետականությունն է, ծիսական խեղճությունն է, հետամնացությունն է, այլ կատարյալ մարդկայնություն, որ մարդուն պետք է գալու ամենուր և ամեն օր, քանի կյանքը կա:


Ճակատը համբուրելի ժողովուրդ է Սիսիանի ժողովուրդը: Եվ ես շնորհակալ եմ ճակատագրից, որ այդ ժողովրդի գավակն եմ և նրա երազաշատ ապրումների թարգման բանաստեղծը:

ՀԱՍՈ ՍԱՀՅԱԼ



Դարբաս գյուղը՝ Որոտանի աջակողմյան վտակ Լոր գետի ձախ ափին

Շամբ գյուղի տեսարժան վայրերից մեկը՝ ջրամբարը՝ «Մարգարտածաղիկ» ջրթափով



Սուրբ Ստեփանոս Նախավկայի անունը կրող եկեղեցին Դարբասում (2010թ.)

Այոնյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:

(+374 91) 45 90 47

(+374 77) 45 90 47

syuniacyerkir@mail.ru

www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Երկրորդ ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԾՐ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում

տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Այոնյաց երկրին» պարտադիր է: Նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Ս 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 3200, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 13.09.2022թ.: